

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

2016 թվապահի Փետրվարի 19-ին Երեվանի ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԵԼԱՌՈՒՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՏՈՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԽԱՂԱՂ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

8 հուլիսի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարի տեղակալ Ա. Գալստյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005թ. փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2016 թվականի փետրվարի 19-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կա-

ռավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև ատոմային էներգիայի խաղաղ օգտագործման բնագավառում համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2016 թվականի հունիսի 14-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց** .

1. Համաձայնագիրն ստորագրվել է 2016 թվականի փետրվարի 19-ին Երևանում՝ խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում կողմերի միջև համագործակցության զարգացման և ամրապնդման համար: Համագործակցության ուղղությունները նախատեսվում են քննության առարկա համաձայնագրի 3-րդ հոդվածով, իսկ ձևերը՝ 4-րդ հոդվածով:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է հետևյալ հիմնական պարտավորությունները.

- զարգացնել և ամրապնդել խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում համագործակցությունը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ազգային միջուկային ծրագրերի պահանջներին և առաջնահերթություններին համապատասխան (հոդված 1),

- Համաձայնագրի իրականացման նպատակով որպես Հայաստանի Հանրապետության իրավասու մարմին նշանակել ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը (հոդված 5, կետ 1),

- դիվանագիտական ուղիներով անհապաղ տեղեկացնել Բելառուսի Հանրապետությանն այլ իրավասու մարմին նշանակելու կամ դրա անվանափոխման դեպքում (հոդված 5, կետ 2),

- ապահովել, որպեսզի Համաձայնագրով նախատեսված համագործակցության իրականացման պայմանները սահմանվեն ՀՀ լիազորված կազմակերպության և Բելառուսի Հանրապետության լիազորված կազմակերպության միջև՝ Հայաստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, երկկողմ պայմանագրերի կնքմամբ (հոդված 6, 1-ին պարբերություն, հոդված 2, 9-րդ պարբերություն),

- ապահովել, որպեսզի Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը հաստատի Համաձայնագրի 3-րդ հոդվածում նշված համագործակցության ուղղությունների իրականացման համար մշակվող համատեղ ծրագրերը (նախագծերը) (հոդված 6, 3-րդ պարբերություն),

- իրականացնել փոխանցված և (կամ) համագործակցության ընթացքում ստեղծված գաղտնի տեղեկատվության պաշտպանության փոխադարձաբար ապահովումը գաղտնի տեղեկատվության փոխադարձաբար պաշտպանության բնագավառում երկկողմ միջազգային համաձայնագրին համապատասխան (հոդված 7, կետ 1),

- հստակ սահմանել և նշել Համաձայնագրին համապատասխան փոխանցվող կամ դրա իրականացման արդյունքում ստեղծվող տեղեկատվությունն այն դեպքում, երբ Հայաստանի Հանրապետության կողմից այն դիտարկվում է որպես այնպիսի տեղեկատվություն, որի տարածումը և (կամ) տրամադրումը սահմանափակ է (հոդված 7, կետ 2, 1-ին պարբերություն),

- որպես տեղեկատվությունն ստացող կողմ՝ ապահովել, որպեսզի այն տեղեկատվության օգտագործումը, որի տարածումը և (կամ) տրամադրումը սահմանափակ է, և դրա պաշտպանությունն իրականացվեն Հայաստանի Հանրապետության ազգային օրենսդրությանը համապատասխան՝ հաշվի առնելով Համաձայնագրի պահանջները, չիրապարակվի կամ չփոխանցվի երրորդ կողմի՝ առանց Բելառուսի Հանրապետության գրավոր թույլտվության (հոդված 7, կետ 2, 2-րդ պարբերություն),

- Համաձայնագրի շրջանակներում աջակցել Բելառուսի Հանրապետությանն ատոմային էներգիայի խաղաղ օգտագործման բնագավառում համատեղ կամ

ազգային ծրագրերի իրականացման համար նյութերի, տեխնոլոգիաների, սարքավորումների և ծառայությունների փոխանցման հարցում, և նշված փոխանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան (հոդված 8),

- Համաձայնագրի շրջանակներում միջուկային նյութերի, սարքավորումների, հատուկ ոչ միջուկային նյութերի և համապատասխան տեխնոլոգիաների արտահանումն իրականացնել 1968թ. հուլիսի 1-ի՝ «Միջուկային զենքի չտարածման մասին» պայմանագրից բխող ՀՀ պարտավորություններին, ինչպես նաև արտահանման վերահսկման բազմակողմ մեխանիզմների շրջանակներում այլ միջազգային պայմանագրերին և պայմանավորվածություններին համապատասխան, որոնց մասնակից են Հայաստանի Հանրապետությունը և Բելառուսի Հանրապետությունը (հոդված 9, կետ 1),

- Համաձայնագրին համապատասխան ստացված միջուկային նյութերը, սարքավորումները, հատուկ ոչ միջուկային նյութերը և համապատասխան տեխնոլոգիաները, ինչպես նաև դրանց հիման վրա կամ դրանց օգտագործման արդյունքում արտադրված միջուկային և հատուկ ոչ միջուկային նյութերը, սարքավորումները և համապատասխան տեխնոլոգիաները չօգտագործել միջուկային զենքի և այլ միջուկային պայթուցիկ սարքերի արտադրության նպատակով կամ որևէ այլ ռազմական նպատակի հասնելու համար (հոդված 9, կետ 2, 1-ին պարբերություն),

- Համաձայնագրին համապատասխան ստացված միջուկային նյութերը, սարքավորումները, հատուկ ոչ միջուկային նյութերը և համապատասխան տեխնոլոգիաները, ինչպես նաև դրանց հիման վրա կամ դրանց օգտագործման արդյունքում արտադրված միջուկային և հատուկ ոչ միջուկային նյութերը, սարքավորումները և համապատասխան տեխնոլոգիաներն ապահովել ֆիզիկական պաշտպանության միջոցներով, որոնց մակարդակը ցածր չի լինի ԱԷՄԳ-ի՝ «Միջուկային նյութերի և միջուկային տեղակայանքների ֆիզիկական պաշտպանությանը վերաբերող՝ ֆիզիկական միջուկային անվտանգության գծով

առաջարկություններ» փաստաթղթում (INFCIRC/225/Rev.5) և դրա հետագա փոփոխություններում առաջարկված մակարդակից (հոդված 9, կետ 2),

- Համաձայնագրին համապատասխան ստացված միջուկային նյութերը, սարքավորումները, հատուկ ոչ միջուկային նյութերը և համապատասխան տեխնոլոգիաները, ինչպես նաև դրանց հիման վրա կամ դրանց օգտագործման արդյունքում արտադրված միջուկային և հատուկ ոչ միջուկային նյութերը, սարքավորումները և համապատասխան տեխնոլոգիաները վերաարտահանել կամ Հայաստանի Հանրապետության իրավագործությունից փոխանցել ցանկացած երրորդ պետություն միայն Բելառուսի Հանրապետության նախնական գրավոր թույլտվության դեպքում (հոդված 9, կետ 2),

- Համաձայնագրի շրջանակներում փոխանցվող միջուկային նյութերը, ինչպես նաև Համաձայնագրի շրջանակներում փոխանցված միջուկային նյութերի, սարքավորումների, հատուկ ոչ միջուկային նյութերի օգտագործման արդյունքում արտադրված միջուկային նյութերը չհարստացնել ուրան-235 իզոտոպով մինչև 20 և ավելի տոկոս ցուցանիշը, ինչպես նաև չհարստացնել և չվերամշակել՝ առանց Բելառուսի Հանրապետության նախնական գրավոր համաձայնության (հոդված 9, կետ 3),

- միջուկային նյութերի, սարքավորումների, հատուկ ոչ միջուկային նյութերի և համապատասխան տեխնոլոգիաների արտահանման վերահսկման հարցերով համագործակցել Բելառուսի Հանրապետության հետ, ինչպես նաև փոխանցված միջուկային նյութերի, սարքավորումների, հատուկ ոչ միջուկային նյութերի և համապատասխան տեխնոլոգիաների, ինչպես նաև դրանց հիման վրա կամ դրանց օգտագործման արդյունքում արտադրված միջուկային և հատուկ ոչ միջուկային նյութերի, տեղակայանքների և սարքավորումների օգտագործման վերահսկողությունն իրականացնել Բելառուսի Հանրապետության հետ խորհրդատվությունների միջոցով համաձայնեցված ձևով (հոդված 9, կետ 4),

- Համաձայնագրի շրջանակներում չիրականացնել ճառագայթված միջուկային վառելիքի քիմիական վերամշակման, ուրանի իզոտոպային հարստացման և ծանր ջրի արտադրության տեխնոլոգիաների և տեղա-

կայանքների, դրանց հիմնական բաղադրիչների կամ դրանց հիման վրա արտադրված ցանկացած այլ առարկայի, ինչպես նաև, ըստ ուրան-235 իզոտոպի, 20 և ավելի տոկոսով հարստացված ուրանի, պլուտոնիումի և ծանր ջրի փոխանցում (հոդված 10),

- Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և այն միջազգային պայմանագրերին համապատասխան, որոնց մասնակից են Հայաստանի Հանրապետությունը և Բելառուսի Հանրապետությունը, ապահովել Համաձայնագրին համապատասխան փոխանցվող կամ ստեղծվող մտավոր սեփականության իրավունքների արդյունավետ պաշտպանություն (հոդված 11, 1-ին պարբերություն),

- Բելառուսի Հանրապետության խնդրանքով անցկացնել խորհրդատվություններ՝ Համաձայնագրի արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով (հոդված 14, 1-ին պարբերություն):

3. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Համաձայնագրի 16-րդ հոդվածի 4-րդ կետի ուժով՝ Համաձայնագրի գործողության դադարեցման դեպքում Համաձայնագրի 7-րդ և 9-րդ հոդվածներով կողմերի ստանձնած պարտավորությունները մնում են ուժի մեջ:

4. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են ՀՀ Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա պետությունների հետ փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2016 թվականի փետրվարի 19-ին Երևանում ստորագրված` Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև ատոմային էներգիայի խաղաղ օգտագործման բնագավառում համագործակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

8 հուլիսի 2016 թվականի  
ՄԴՈ-1292